ԱՎԵՏԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու, դոցենտ

ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆԳՐՎԱՆՈՒՄԸ ՎԱՂԱՐՇԱՊԱՏՈՒՄ ԵՒ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆԸ

1914 թ. հուլիս 28-ին բռնկված համաշխարհային հրդեհը փոթորկեց ու ալեկոծեց ամբողջական տարածաշրջաններ, երկրներ, ազգեր ու կայսրություններ։ Առաջին տուժողներից էր նաեւ հայ ժողովուրդը, որ պատմական անարդարության հետեւանքով ցրված ու սփռված էր աշխարհով մեկ, իսկ պետականությունը կորցրած հայրենիքը բզկտված ու տրոհված էր գլխավորապես երեք օտար ախոյանների սահմաններում։

Յանկացած պատերազմի ժամանակ առաջին տուժողը մշտապես խաղաղ, անզեն, անպաշտպան բնակչությունն է՝ կանայք, երեխաներն ու տարեցները։ Ու նման դեպքերում թերեւս լավագույն ելքն այն է լինում, երբ նրանք կանխապես լքած են լինում ռազմական հնարավոր ընդհարումների ու գործողությունների տարածքները։ Ճիշտէ՝ հայրենի ակութից հեռացողը կամավոր ընդունում է գաղթականին սպասող այլեւայլ զրկանքները (սեփական ծածկի եւ տաք անկյան կորուստ, սնունդի եւ գոյատեւելու նվազագույն պայմանների բացակայություն եւն), բայց այսուհանդերձ՝ ողջ մնալու հույս է ձեռք բերում։ Հայ գաղթականության հոսքը դեպի համեմատաբար ապահով արեւելահայ տարածքներ սկսվել էր բավական վաղուց, սակայն պատերազմի սկսվելով՝ ներհոսքը սաստկացավ։

Դեկտեմբերի 21-ին, Ամենայն Հայոց Կաթողիկոսության հովանու ներքո, գաղթականության հարցերով զբաղվող նորաստեղծ մարմինները Մայր Աթոռի միաբան եւ Երեւանի փոխթեմակալ Խորեն եպիսկոպոսի ղեկավարությամբ Երեւանում հրավիրեցին արտակարգ մի ժողով, որի ժամանակ կազմավորվեց Եղբայրական օգնության խառը հանձնաժողովը՝ բաղկացած 25 անդամից։ Վերջինիս վստահվեց Երեւանի նահանգում գաղթականներ ընդունելու եւ տեղավորելու դժվարին պարտականությունը։ Դեկտեմբերի 26-ին կայացած ժողովում հանձնախումբը համալրվեց նոր անդամներով, ընտրվեց գործադիր մարմին, ձեւավորվեցին

ծխական-համայնական մասնախմբեր (ենթակոմիտեներ) եւ զանազան մասնաճյուղեր[1]։

Արեւմտյան Հայաստանի տարբեր շրջաններից եւ Ատրպատականից տեղահանված հազարավոր գաղթականներ էջմիածին հասան 1914 թ. դեկտեմբերի 26-ին։ Էջմիածինը ձգողական մի կենտրոն էր՝ ահաբեկված եւ փրկության շյուղ որոնող բազմահազար գաղթականների համար։ Այս առիթով Հովհ. Թումանյանն իր «Թանկ մարդու հիշատակին» հոդվածում գրում է. «Աղետալի գաղթականություն... Տաճկաստանից գետացած եկավ ու ծովացավ էջմիածնի շուրջը»[2]։

1914 թ. դեկտեմբերի 28-ի կաթողիկոսական թիվ 1990 կոնդակով էջմիածնում կազմավորվեց Եղբայրական օգնության հանձնաժողովը, որը Եղբայրական օգնության կոմիտեի կենտրոնական մարմինն էր։ Այն Ամենայն Հայոց Կաթողիկոսի ենթակայության ներքո էր եւ բաղկացած էր 14 անդամից, (որոնցից 4-ն ընտրված էին Վաղարշապատից, 4-ը՝ Երեւանից, 2-ը՝ Թիֆլիսից, 1-ը՝ Պետրոգրադից, 1-ը՝ Ալեքսանդրապոլից, եւ 2-ը՝ Արեւմտյան Հայաստանից)[3]։ Հանձնաժողովի կազմում ընդգրկվեցին Եփրեմ, Բագրատ, Մատթեոս եպիսկոպոսները եւ Գարեգին, Բաբկեն, Վրթանես վարդապետները։ Գլխավոր կարգադրիչ հանձնաժողովն ուներ 3 գլխավոր մասնաճյուղ էջմիածնում, Երեւանում եւ Ալեքսանդրապոլում։ Ավելի ուշ Եղբայրական օգնության հանձնաժողովներ ստեղծվեցին նաեւ Կարսում, Նոր Բայազետում, Ներքին Ախտայում, Ելենովկայում (այժմ՝ Սեւան), Իգդիրում, Քանաքեռում, Նախիջեւանում, Մեծամորում, Արտաշատում (Ղամարլու) եւ Մեծավանում (Մեծ Ղարաքիլիսա), որոնք ենթարկվեցին Երեւանի մասնաճյուղին[4]։ Հանձնաժողովի առջեւ խնդիր դրվեց խնամել եւ բժշկական օգնություն ցուցաբերել փախստականներին, մանրամասն տեղեկություններ հավաքել նրանց առողջական վիճակի մասին եւ համագործակցել Արեւելյան Հայաստանի մյուս քաղաքների Եղբայրական օգնության հանձնաժողովների հետ[5]։

---

[1] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 50, ց. 1, գ. 18, թ. 109, հմմտ. գ. 184, թ. 1, նաեւ ֆ. 57, ց. 2, գ. 1257, թ. 1, նաեւ* С. Асланяц, Среди беженцев (личные впечатления), Астрахань, 1915, *էջ 11—12։*

[2] *Հովհ. Թումանյան, Հուշեր եւ զրույցներ, Երեւան, 1969, էջ 130։*

[3] *ՀԱԱ, ֆ. 239, ց. 1, գ. 21, թ. 75, նաեւ ֆ. 27, ց. 1, գ. 245, թ. 4, նաեւ ֆ. 55, ց. 1, գ. 115, թ. 2։*

[4] Public Record Office of England, FO 371/70371/2768, file (161096), p. 358.

[5] *«Հորիզոն» (Թիֆլիս), 1915, փետրուարի 18, թիւ 37։*

Հարկ է նկատել, որ մինչ գաղթականության հիմնական հոսքը կհասներ Վաղարշապատ, Ամենայն Հայոց կաթողիկոս Գեւորգ Ե.-ի հրամանով Երեւանի փոխթեմակալ Խորեն եպիսկոպոսը գործուղվեց Իգդիր՝ այնտեղ Եղբայրական օգնության հանձնաժողով կազմավորելու եւ գաղթականների ընդունման ու տեղաբաշխման գործը համակարգելու նպատակով։ Իսկ երբ սկսվեցին հասնել հիմնական խմբերը, կաթողիկոսական մեկ այլ որոշմամբ Գարեգին վարդապետն ուղարկվեց Իգդիր, Արիստակես վարդապետը՝ Մարգարա (իբրեւ օգնականներ ունենալով Սարդարապատի գործակալին եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանի ուսանողներին), իսկ Մատթեոս եպիսկոպոսը տեղափոխվեց Նախիջեւան՝ գաղթականներին տեղում ընդունելը կազմակերպելու նպատակադրությամբ[6]։

Ցրտից ու քաղցից հոգնաբեկ, բարոյական տանջանքներից կեղեքված, հարստահարված եւ ուժասպառ, մերկ, անոթի, անօգնական ու անմարդկային ցնցումներից չսթափված առաջին գաղթականները տեղավորվեցին Մայր Աթոռի երկու ընդարձակ սենյակներում, սեղանատանը, վանքի ագարակում, Գայանե վանքի տնտեսական կառույցներում, Վաղարշապատի երկու դպրոցներում, քաղաքի երկու զորանոցներում, շուկայի դատարկ տաղավարներում ու մասնավոր տներում[7]։

Գաղթականների հոսքը, որ ըստ էության՝ շարունակվեց մինչեւ փետրվարի 20-ը, հատկապես ուժգնացավ 1914-ի դեկտեմբերի 26-ից մինչեւ 1915-ի հունվարի 10-ն ընկած ժամանակահատվածում։ Գաղթականների վերջին ալիքն առավելապես Իգդիրից եւ շրջակայքից էր։ Բնաջնջման ահագնացող վտանգից խուսափելով՝ նրանք ստիպված էին հայրենի կողմերից հեռանալ դեպի Վաղարշապատ[8]։ Մինչեւ 1915 թ. հունվարի 1-ը գաղթականների թիվը հայոց հոգեւոր մայրաքաղաքում հասավ 7000—8000-ի։ Նրանց ողբալի վիճակը փաստված է ռուսական բանակի վրացի սպաներից մեկի՝ 1915 թ. հունվարի 9 թվակիր նամակում։ Վաղարշապատում տիրող ծանր կացության այս ականատեսը վկայում է. «...ով չի տեսել նրանց (խոսքը հայ գաղթականների մասին է.— Ա. Հ.) թշուառ դրու-

---

[6] *Անդ։*

[7] *«Հորիզոն», 1915, յունուարի 10, թիւ 6։*

[8] *Իգդիրից հետո Վաղարշապատինը երկրորդ ամենամեծ կայարանն էր, ուր ժամանակավորապես կանգ էին առնում մազապուրծ եղած փախստականները՝ հանգստանալու, մի պահ շունչ առնելու եւ իրենց վերջնական հանգրվանը որոշելու համար։ Այդ մասին տե՛ս* Մ. Խերանյան, *Երկար-երկար մի ճանապարհ, Երեւան, 1983, էջ 232։*

թիւնը, անկարող է երեւակայել անգամ։ Ես անձամբ իմ թշնամուն չէի ցանկանայ թշուառ փախստականների վիճակում լինել։ Իգդիրից մինչեւ Ալաշկերտ փռուած են նրանց երեխաների դիակները։ Պատկերը սոսկալի է։ Կիսամերկ, կիսաքաղց, շարան-շարան գալիս են դէպի ռուսական հողը։ Դրանք մարդիկ չեն, այլ կմախքներ...»[9]։

Եղբայրական օգնության հանձնաժողովը մեծ ուշադրություն էր դարձնում հատկապես գաղթականության սննդի ապահովմանը։ Դեկտեմբերի 29-ից հունվարի 10-ը Ս. Էջմիածնում միջին հաշվով օրական 6500—7000 գաղթական էր սնունդ ընդունում[10]։ Հանձնաժողովի անդամները նրանց տաք կերակուր, թեյ, հագուստ մատակարարելուց եւ երկու-երեք օր իրենց հոգածության ներքո պահելուց հետո վարձված բեռնասայլերով ճանապարհում էին Էջմիածնի գավառի հայաբնակ գյուղերը, կամ՝ ի պահանջել հարկին, Սարդարապատ ու Երեւան[11]։ Հիշյալներին տեղավորելուց հետո Վաղարշապատում մնաց շուրջ 1000 հոգի, որոնց խնամատարությունը շարունակվեց մինչեւ 1915 թ. ապրիլ-մայիս ամիսները[12]։

Հաշվի առնելով գաղթականական աղետը եւ դրա ծանր հետեւանքները՝ Եղբայրական օգնության գլխավոր կարգադրիչ հանձնաժողովը 1915 թ. հունվարի 9-ին հրապարակեց հայ քրիստոնյա ազգաբնակչությանն ուղղված կոչ, ուր ասված էր. «...Դո՛ւ, հայ ժողովուրդ, որ ցաւի, տանջանքի, վշտի մեծագոյն բաժինն ես ճաշակել միշտ անցեալում, քո կարեկցութիւնը դէպի այս թշուառները պէտք է աւելի շատ լինի, ուստի Վեհափառ Հայրապետի բարձր հովանաւորութեան ներքոյ գործող Ս. Էջմիածնի յանձնախումբը դիմում է քեզ եւ հրաւիրում ամեն կերպ աջակցելու եղբայրական օգնութեան սուրբ գործին։ Թեթեւացրէ՛ք մեր թշուառ եղբայրների եւ քոյրերի ծանր վիճակը»[13]։

Սկզբում գաղթականներին անձնական միջոցներով օգնություն էր ցուցաբերում միայն տեղի բնակչությունը։ 1915 թ. հունվարի 26-ի տվյալներով՝ վաղարշապատցիների հարկի տակ ապաստանել էին տարբեր տեղերից մազապուրծ գաղթականներ. տե՛ս հաջորդող աղյուսակը[14]։

---

[9] «Մշակ», 1915, յունուարի 17, թիւ 10։
[10] «Արարատ», 1915, Դ.—Ե., էջ 310։
[11] Անդ, էջ 309—310։
[12] Անդ, էջ 310։
[13] ՀԱԱ, ֆ.57, ց. 2, գ. 1260. թ. 13, նաեւ ց. 3, գ. 75, թ. 1։
[14] Կազմել ենք ըստ «Հորիզոն»-ի (1915, փետրվարի 8, թիվ 30) տվյալների։

Օրրան	Ընտանիք	Հոգի
Ալաշկերտ	44	308
Մանգասար	17	157
Բերդ	4	24
Ջարո	4	23
Քյուլիպուճախ	3	24
Յոնջալու	4	29
Դութաղ	3	21
Մազրա	4	14
Խասպոր	1	4
Երիցգյուղ	1	4
Թավրիզ	5	20
Խոյ	1	5

Բայց քանի որ տեղական բնակչության եւ հատկապես գյուղացիների հնարավորությունները սահմանափակ էին, էջմիածնի հանձնաժողովը բոլոր գյուղերում ընտրեց Եղբայրական օգնության տեղական հոգաբարձուներ, որ պետք է կանոնավորեին գաղթականներին ցուցաբերվող օգնությունը։ Գլխավոր կոմիտեն գործում էր համախորհուրդ Երեւանի կոմիտեին, որի լիազորն էր Խորեն եպիսկոպոսը։ 1915 թ. հունվարի 24-ին Երեւանի կոմիտեի ներկայացուցիչները հրավիրվեցին էջմիածին, ուր Վեհափառ Հայրապետը հաստատեց գործունեության ընդհանուր ծրագիրը[15]։

Օգնության գործին մեծապես նպաստեց Վեհափառի կոչը, որն արձագանքեց համայն հայության սրտերում։ Գրեթե ամենքը շտապեցին իրենց պարտքը կատարել եւ գաղթականներին դրամական ու նյութական օժանդակություն ցուցաբերել։

Գաղթականներին բժշկական օգնություն ցուցաբերելու համար հանձնաժողովը Երեւանից հրավիրել էր Ամերիկայում կրթություն ստացած բժիշկ Օգսենտ Տեր-Հարությունյանին, ժամանակին թուրքական զորքի գերված արեւմտահայ բժիշկներ Հովսեփյանին եւ Բլբուլյանին։ Արդեն փետրվարի 13-ին բժիշկ Տեր-Հարությունյանի ղեկավարությամբ նախ բացվեց 25 մահճակալով հիվանդանոց-բուժարան, ապա բժիշկ Թաշճյանի գլխավորությամբ եւ Բաքվի մշակութային ընկերության ծախ-

[15] *«Հորիզոն», 1915, փետրուարի 18, թիւ 37։*

սերով՝ երկրորդ գաղթականական հիվանդանոցը[16] եւ բաղնիք, որն այդ շրջանում նույնքան անհրաժեշտ էր, որքան հացը. հարկավոր էր ամեն կերպ խուսափել հիվանդությունների տարածումից, վարակից եւ համաճարակից[17]. վտանգ, որ ավելի ու ավելի էր սպառնում փոքր տարածքում մեծ բազմությամբ խմբված թույլ, տկար ու հյուծված մարդկանց: Բայց անգամ այս սպառնալիքն էին արհամարհում Էջմիածնի Եղբայրական օգնության գլխավոր կարգադրիչ հանձնաժողովի անդամները, որ ինքնամոռաց կերպով մտնում էին գաղթականների զբաղեցրած հատվածները եւ կատարում իրենց պարտականությունները. հագուստ բաժանում ու կերակրում, մխիթարական խոսքեր ասում՝ փորձելով հայրաբար սփոփել նրանց, հորդորել ու համոզել, որ չընկրկեն, չհանձնվեն, պայքարեն ու կամք դրսեւորեն:

Եղբայրական օգնության գլխավոր կոմիտեն 1914 թ. դեկտեմբերի 27-ից մինչեւ հունվարի 25-ն ընկած ժամանակահատվածում Էջմիածնի վանքի եւ Վաղարշապատի տարբեր շինություններում ապաստան տվեց եւ կերակրեց մոտ 15 000 փախստականի, իսկ հաջորդող օրերին նրանց տեղավորեց մերձակա գյուղերում: Ամեն օր գաղթականներին բաժանվում էր 100–300 փութ հաց, տաք կերակուր, թեյ, սուրճ, նաեւ հագուստ եւ ծածկոցներ[18]:

Հիշյալ ժամանակահատվածում, ի սեր փախստականների, կոմիտեն Վաղարշապատում ծախսել է մոտ 20 000 ռ.: Բացի այդ՝ Երեւանի Եղբայրական օգնության կոմիտեին է ուղարկվել 40 000 ռ., Ալեքսանդրապոլի կոմիտեին՝ 10 000 ռ., Նախիջեւանի կոմիտեին՝ 5000 ռ., Իգդիրի կոմիտեին՝ 1950 ռ., Նոր Բայազետի կոմիտեին՝ 1000 ռ., եւ Աշտարակի կոմիտեին՝ 400 ռ.: Եղբայրական օգնության կոմիտեի գործունեության մասին Բեսարաբիայի թեմի կոնսիստորիայի նախագահ Տիրայր վարդապետին հղած իր նամակում սինոդի անդամ եւ «Արարատի» խմբագիր Բաբգեն վարդապետ Աղավելյանը գրում էր. «...գիտես, որ «Արարատի» ամբողջ գործն իմ վզին է, որքան հնարաւոր է աշխատում եմ, չնայած, որ շուրջս սոսկալի տեսարան է ներկայացնում գաղթականութիւնը, ամ-

[16] «Արարատ», 1915, Դ.–Ե., էջ 310:

[17] Ականատեսի վկայությամբ՝ «այնպիսի՛ կեղտոտութիւն է, այնպիսի՛ վանող հոտ է գալիս նրանց վրայից եւ այն սենեակից, ուր նրանք անց են կացրել մի քանի ժամ, որ խեղդուել կարելի է...», «Մշակ», 1915, մարտի 4, թիւ 47:

[18] «Մշակ», 1915, փետրուարի 18, թիւ 35:

բողջ օրը նրանցով եմ զբաղուած՝ օրական 5—6 հազար մտնում եւ դուրս է գալիս, իսկ տեղում՝ էջմիածնում, միշտ 60 հազարից աւելի լցուած են։ Սոսկալի դրութիւն է, 3 հազարից աւելի որբեր են ժողովուել Վեհարանում, որը վերածուած է որբանոցի եւ հիւանդանոցի։ Աշխատող ձեռք քիչ ունենք»[19]։

Առաջին անհրաժեշտության պարագաներով, սնունդով հագուկապուստով գաղթականությանն ապահովելուն զուգահեռ ուշադրություն դարձվեց նաեւ կրթության հարցերին։ Դեռեւս մարտին, երբ փախստականների թիվը տակավին մեծ չէր, այնուամենայնիվ հիվանդություններն ու համաճարակն սկսել էին այնպիսի կերպարանք ստանալ, որ էջմիածնում կարգադրություն տրվեց հիվանդությունների տարածման վայրերում դպրոցական պարապմունքներն ավարտել մեկ ամիս շուտ՝ մայիսի 1-ին[20]։ Դրան հակառակ՝ Վաղարշապատի ծխական դպրոցի մանկավարժական ժողովի ջանքերով գրաճանաչության դասընթացներ կազմակերպվեցին 60—70 գաղթական երեխաների համար։ Էջմիածնի հանձնաժողովը սիրով հոգում էր այդ երեխաների թե՛ ուսումնական պարագաների խնդիրը (դասագիրք, տետր, գրենական պիտույքներ) եւ թե՛ հագուստն ու սնունդը։

Այս ժամանակահատվածում է, որ ինքնամոռաց սպասավորության ընթացքում էջմիածնի միաբանությունն ունեցավ զգալի զոհեր ու կորուստներ։ Փախստականներից ժանտախտով վարակվեցին եւ մինչեւ 1915 թ. օգոստոսը մահացան Ս. Էջմիածնի Եղբայրական օգնության գլխավոր կարգադիր հանձնաժողովի նախագահ եւ Սինոդի անդամ Եփրեմ եպիսկոպոս Սուքիասյանը եւ Մայր Աթոռի միաբան Վահան վարդապետը[21]։ 1915 թ. դեկտեմբերի 27-ին որբերից բծավոր տիֆով վարակվելով՝ 1916 թ. հունվարի 3-ին, 42 տարեկան հասակում, վախճանվեց Եղբայրական օգնության հանձնաժողովի անդամ եւ Ս. Էջմիածնի որբանոցի կառավարիչ Տ. Բաբգեն վարդապետ Աղավելյանը[22]։

---

[19] Ստ. Կերոնդ, Հայ Առաքելական եկեղեցին Առաջին աշխարհամարտի տարիներին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2003, էջ 156։

[20] «Հորիզոն», 1915, մարտի 3, թիւ 66։

[21] ՄԱՄ, Տիրան վարդապետի արխիվ, թղթ. 126, վավ. 449։

[22] «Արարատ», 1916, յունուար-փետրուար, էջ 49։ Աղավելյանի մասին «Մշակը» պիտի գրեր. «Մի գործունեայ, եռանդուն եւ աշխատասէր ուժ եւս պակասեց էջմիածնի միաբանութիւնից։ Եւ նրա մահը զգալի պէտք է լինի ոչ միայն էջմիածնի, այլեւ հայ մամուլի համար, որովհետեւ Բաբգէն վարդապետը թէ՛ մատենագիր էր եւ թէ՛ խմբագիր». տե՛ս «Մշակ», 1916, յունուարի 9, թիւ 4։

Եթե հաշվի առնենք նաեւ այն, որ այդ նույն ժամանակ վախճանվել էին Մայր տաճարի լուսարարապետ Ղեւոնդ եպս. Հովակիմյանը, Սեւանա մենաստանի վանահայր Սարգիս եպս. Փիլոյանը, Սինոդի գանձապահ Համազասպ վրդ. Համազասպյանն ու Շամախու թեմի առաջնորդ Կարապետ եպս. Տեր-Մկրտչյանը, ապա կարելի է վստահաբար ասել, որ այդ ժամանակաշրջանում Մայր Աթոռն ունեցել է ծանր կորուստներ[23]։ Մահից հազիվ փրկվեց Ս. Էջմիածնի Եղբայրական օգնության հանձնաժողովի անդամ Գարեգին վրդ. Հովսեփյանը[24]։ Փրկվեցին նաեւ հայր Վրթանեսը, որն ունենալով երկաթյա առողջություն՝ հայ հոգեւորականին հատուկ իր անձնվեր հոգատարությամբ սկզբից եւեթ մեծ եռանդով աշխատում էր ի սեր գաղթականության[25]։ Հաջորդը Վաղարշապատի ծխատեր քահանա Ա. Ղազարյանն էր, որ Թադեոս աբեղայի հետ միասին ամեն օր հաց էր բաժանում գաղթականներին եւ այցելում նրանց կացարանները՝ մխիթարելով եւ հոգեպես ամրապնդելով հուսահատ մարդկանց[26]։

Արեւմտահայության համար խիստ աղետաբեր էր նաեւ 1915 թ. հուլիսը. այդ ամսին մեծ թվով գաղթականներ հանգրվանեցին ինչպես Երեւանի նահանգի մի շարք բնակավայրերում, այնպես եւ Էջմիածնում։ Թուրքական սահմանից մինչեւ Էջմիածին ընկած տարածքը լի էր փախստականներով, որոնք դժվարությամբ հաղթահարելով գաղթի ճանապարհը՝ կարծես թե գալիս էին փարվելու Մայր Հայրենիքին։ Իգդիրի եւ Էջմիածնի կայարանների միջեւ ընկած սննդատու 2 կայաններն իհարկե չէին կարող բավարարել պահանջները հետիոտն առաջ ընթացող բազմաթիվ գաղթականների, որոնք զրկված լինելով սննդի պաշարներից՝ ճանապարհին սնվում էին այն ամենով, ինչ ընկնում էր իրենց ձեռքը. չհասունացած հասկեր, ազոխ պտուղներ, խաղող եւ այլն[27]։ Թիֆլիսի Հայկական կենտրոնական կոմիտեին ուղղված՝ Ս. Հարությունյանի 1915 թ. օգոստոսի հեռագրից պարզվում է՝ գաղթի կածաններին դեռք էին իրականացնում հեծյալները, որ ժողովում էին ճանապարհին մնացած երեխաներին, հիվանդներին եւ մահացածների դիակները[28]։

---

[23] Ս. Կերոնդ, *նշ. աշխ., էջ 157։*

[24] *ՄԱՄ, Գարեգին արքեպս. Հովսեփյանի արխիվ, թղթ. 95, վավ. 446։*

[25] *«Մշակ», 1915, մարտի 4, թիւ 63։*

[26] *Անդ։*

[27] *Տե՛ս* Положение беженцев в Александрапольском районе, Доклад уполномоченного Бакинского комитета помощи беженцам без различия национальностей А. Г. Иоаннисяна, сделанный им на заседаний Ком-та 3 октября 1915 г., Баку, *1915, էջ 10։*

[28] *«Փայլակ», 1915, օգոստոսի 9, թիւ 44։*

Ռուսաստանի արտգործնախարար Ս. Սազոնովին ուղղված՝ Հակոբ Զավրիեւի[29] 1915 թ. սեպտեմբերի 3-ի նամակից պարզվում է, որ 1915 թ. հուլիսյան գաղթի արդյունքում Երեւանի նահանգում կենտրոնացել է շուրջ 200 հազար գաղթական[30]։

Տասն օրվա ընթացքում էջմիածին հասավ ավելի քան 45 000[31], իսկ որոշ տվյալներով՝ 70 000 գաղթական, որոնցից 4503-ը՝ Շատախից, 4630-ը՝ Վանից եւ հարակից շրջաններից, 4510-ը՝ Գավաշից, 5570-ը՝ Հայոց ձորից, 2730-ը՝ Կարկառից, 760-ը՝ Կարճկանից, 4600-ը՝ Մոկսից, 1036-ը՝ Ոզմից, 4500-ը՝ Ալջավազից, 4750-ը՝ Թիմարից, 8196-ը՝ Խլաթ-Բիթլիսից եւ այլ վայրերից, ընդամենը՝ 45785[32]։

Արարատյան դաշտը եւ էջմիածինը, որ դարեր շարունակ եղել էին հայ ժողովրդի հավատքի եւ հույսի խորանը, այս անգամ խաղաղ հանգրվան որոնող բազմահազար հայերի փրկության տապան-հավաքատեղի դարձան։

Սկզբում շուրջ 5000 գաղթական կուտակվում է Վաղարշապատի երկաթգծի կայարանում։ Գաղթականությունը՝ «քոչերի եւ կմախքների այդ զանգուածը», հյուծված, հիվանդ ու անկարող վիճակում էր։ Ժամանակակիցների վկայությամբ՝ «...հաց չը կայ, հիւանդացողներն ու մեռնողները բազմաթիւ են... կարիքը ծով է»[33]։ Գաղթականներն իրենց ծարավը հագեցնում էին ճահճի ջրով, եւ լոկ քչերը, որ հնարավորություն ունեին, օգտվում էին կայարանում վաճառվող հանքային ջրերից։ «Արեւ» պարբերականը նշում է, որ նրանք «հա՛ց են աղերսում, հաց չկայ... «ջո՛ւր»,— լալիս են մանուկները, եւ ջուր չկայ. Եւ նրանք ստիպուած նետւում են դէպի պղտոր առուները... խմում այդ թոյն ջուրը...»[34]։ Էջմիածնի կայարանից մինչեւ վանք ընկած տարածքում շոգից եւ ջրի պակասից մահացել են շատ գաղթականներ։

Շուտով բյուրավոր գաղթականությունը կուտակվեց էջմիածնի արեւակեզ խորշերում, Ներսիսյան անտառում եւ լճի չորս կողմը, էջ-

---

[29] *Զավրյան/Զավրիյան (1866—1920) — հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ, ծագումով՝ ազնվական, մասնագիտությամբ՝ բժիշկ։*

[30] АВПРИ РФ, ф. Политархив, д. 3479, л. 19—20.

[31] ЦГВИА, ф. 13273, оп. 1, д. 156, л. 3.

[32] ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ, *Երկերի լիակատար ժողովածու տասն հատորով, հտ. 8, ուսումնասիրություններ, օրագրեր եւ այլ նյութեր, Երեւան, 1999, էջ 407։*

[33] *«Արեւ», 1915, սեպտեմբերի 22, թիւ 59։*

[34] *Անդ։*

միածնի վանքի եւ ճեմարանի տարածքում, Ղազարապատում, ապա հանգրվանեցին պատերի տակ, եկեղեցիներում եւ նույնիսկ բանուկ մայթերին՝ զուրկ մաքուր ջրից եւ օդից։ Ականատեսներից մեկը պատմում է. «...Էջմիածին, 28 յուլիսի։ Մարդկային երեւակայութիւնից վեր՝ զարհուրելի տեսարան է ներկայացնում այժմ Էջմիածինն իր շրջանակներով։ Չէք գտնի ոչ մի արշին տեղ, ուր կուտակուած չլինեն զանգուածները։ Բազմահազար գաղթականութիւնը բռնել է ճեմարանի բակը, վանքի գաւիթը, Ղազարապատը, լճի չորս կողմը, նոյնիսկ շուկան ու փողոցները...»[35]։

Եւ այն, ինչ կրեց գաղթականությունն Արարատյան դաշտում, իր զարհուրանքով եկավ մթագնելու այն կորուստները, որ մեկ տարվա ընթացքում հայ ժողովուրդը կրել էր իր հայրենիքում. «դիւային ծրագիրը եկաւ նոր գործադրութիւն գտնելու»[36]։ Եւ դա պատահական չէր, քանի որ աղետը համընդհանուր էր եւ ահավոր։ Համառուսաստանյան քաղաքների միության նախագահ Զելնակովին եւ գլխավոր լիազորի տեղակալ պրոֆ. Ն. Կիշկինին ուղղված՝ Թիֆլիսի քաղաքագլուխ եւ Համառուսաստանյան քաղաքների միության լիազոր Ա. Խատիսյանի 1915 թ. օգոստոսի 24-ի հեռագրից պարզվում է, որ Էջմիածնի վանքի շուրջ հաստատվել է 35 000 փախստական։ Մոտ 150 մարդ ամեն օր մահանում է վանքի պարիսպների տակ, եւ ընդհանրապես դժվար է հանգրվանածների շարքերում տեսնել որեւէ առողջ դեմք[37]։ Իսկ Կենտրոնական կոմիտեի լիազոր Սաղաթելյանի տվյալներով՝ Վաղարշապատից բացի՝ 6 հազար գաղթական ապաստանել է Մարգարա գյուղում, եւս 5 հազար՝ Իգդիրում[38]։

Էջմիածնի ամեն մի օրը լի էր նոր անակնկալներով՝ մեկը մյուսից ավելի վտանգավոր ու չարագույժ, որ ակնթարթային արձագանք եւ աննախադեպ լուծումներ էին պահանջում։ Օրինակ՝ եղանակային պայմաններից ելնելով՝ մարդկանց պատսպարելու հարցը։ Փախստականներին տեղավորեցին բոլոր հնարավոր շենք-շինություններում, ի թիվս այլոց՝ նաեւ նոր Վեհարանում, Գայանե վանքի օժանդակ կառույցներում եւ այլն[39]։

---

[35] Ա.-Դ0, *Մեծ դէպքերը Վասպուրականում (1914—1915 թթ.), Երեւան, 1917, էջ 469—486։*

[36] *Անդ, էջ 481։*

[37] ЦГВИА, ф.13273, оп .1, д. 158, л. 1—2, *նաեւ* Положение беженцев... *էջ 10։*

[38] *«Հորիզոն», 1915, օգոստոսի 21, թիւ 187։*

[39] *Տե՛ս* Վ. Աւաբոնցան, *Հովհաննես Թումանյան. մարդը եւ բանաստեղծը, 1936, էջ 133—135, հմմտ.* Ն. Թուրմանցան, *Հուշեր եւ զրույցներ, էջ 131.* Հովհ. Թուրմանցան, *Ուսումնասիրություններ եւ հրապարակումներ, գիրք 2, Երեւան, 1969, էջ 376։*

էջմիածնում կուտակված գաղթականությունը շուտով առերեսվեց նոր արհավիրքների։ Սովը, վարակիչ հիվանդություններն ու մահացությունները ահավոր էին եւ ահռելի չափերի հասան։ Արխիվային վավերագրերից մեկում կարդում ենք. «Սովը եւ համաճարակ հիւանդութիւնները կհարուածեն մանուկն ու ծերը, այրն ու կինը։ Մահուան մանգաղը կհնձէր անխնայ։ Թաղումները տեղի կունենային զանգուածօրէն եւ խրամների մէջ։ Այս սոսկալի իրականութիւնը կճմլէր մեր սրտերը»[40]։

Վերեւում հիշված հեռագրում ներկայացնելով Վաղարշապատում ապաստանած հայ գաղթականների ահասարսուռ վիճակը՝ Զավրյանը նշում էր. «Ականատեսները, որոնք այնտեղից հեռագրեր են հղում, չեն կարողանում առանց արցունքի նկարագրել այն ամենը, ինչ տեղի է ունենում այդ սովորական, խառնիճաղանջ մարդկային զանգվածի մեջ, որ մնացել է առանց բժշկական օգնության եւ անխտիր ամեն ինչի կարիք է զգում։ Խոլերան եւ մյուս համաճարակները օրական երեք հարյուրից ավելի մարդ են տանում։ Հեռագրում են, որ հարյուրավոր դիակներ անթաղ են մնում՝ եւ նյութական միջոցների, եւ հարկ եղած կազմակերպման բացակայության պատճառով։ Այդ դժբախտ մարդկանց (որ ժամանակի նկարագրությամբ մահանում էին իրար հերթ չտալով)[41] կործանումը անխուսափելիորեն սպառնալիք է ծնում, թե համաճարակը կտարածվի Կովկասով մեկ՝ գյուղերում փախստականների տեղաբաշխմանը զուգընթաց»[42]։

Իսկ պարբերականներից մեկը նշում էր, որ մարդիկ կոտորվում են։

Ամենասարսափելի տեսարանը Ներսիսյան անտառում էր, որի հարավային հատվածի բաց տարածությունը հատուկ որոշմամբ վերածվել էր գաղթականների համար գերեզմանոցի։ Դիակները հավաքում, կառքերով տեղափոխում էին դեպի անտառ, որտեղ հողին էին հանձնում ընդհանուր

---

[40] ՀԱԱ, ֆ. 427, ց.1, գ. 6, թ. 5, հմմտ. Բ. Իշխանեան, *Բ. Իշխանեան, Աղէտի եւ տառապանքի աշխարհից. Այց թիւրքահայ փախստականներին, Թիֆլիս, 1915, էջ 14–15,* Հովհ. Թումանեան, *Երկերի լիակատար ժողովածու տասն հատորով, հատոր 8, ուսումնասիրություններ, օրագրեր եւ այլ նյութեր, էջ 405–406։ Փախստականների ծանր վիճակը ներկայացնող մեկ այլ պատկեր է գրառում 1915 թ. Մոսկվայի հայկական կոմիտեի կողմից էջմիածին եկած մեծանուն նկարիչ Մարտիրոս Սարյանը. տես* Մ. Սարեան, *Գրառումներ իմ կյանքից, Երեւան, 1980, էջ 227–229։ Ծանր տեսարանից տեղի են տալիս Մ. Սարյանի նյարդերը, նկարիչը կորցնում է հանգիստն ու հավասարակշռությունը, եւ ընկերները նրան տեղափոխում են Թիֆլիս։*

[41] Տես «Эриванские объявления», 15 августа, 1915 г., №40. «мрут как мухи»։

[42] «Հայերի ցեղասպանությունն Օսմանյան Թուրքիայում. փաստաթղթերի եւ նյութերի ժողովածու», խմբ.՝ Մ. Ներսիսյան, Երեւան, 1991, էջ 363–364։

գերեզմանոցում։ Ինչպես դեպքերի ականատեսն է վկայում, լույսը դեռ չբացված՝ դիակներ տեղափոխող սայլերն արդեն լծվում էին իրենց չարաբաստիկ պարտականությունների կատարմանը։ Բոլոր կողմերից [մարդիկ]վազում էին դեպի կառքը, խնդրում, որ իրենց մեռելներին եւս վերցնեն։ Ամեն օր տասնյակներով դիակներ էին դուրս բերվում քաղաքից եւ մի քահանայի կողմից թաղման կարգ կատարելով այդ դժբախտ զոհերը ամփոփվում էին միասին՝ հարյուրներով, հազարներով՝ մեկ ընդհանուր փոսի մեջ, կողք կողքի, իրար վրա կուտակված, զանազան դիրքերով, կարծես «նորոգ սրբացված նահատակների հոգիներին հնարավորություն տալով միասին վերառաքվելու առ Աստված»[43]։ Այդպիսի 23 թումբ էր շարված իրար հարեւանությամբ. դրանք ունեին 30–60 քայլ երկարություն։ Գերեզմանոցի ամբողջական երկարությունը 1300 քայլ էր կամ 4300 ոտք, իսկ լայնքը՝ 3 քայլ[44]։ Այդ անտապան, անարձան ու անհիշատակագիր գերեզմանթմբերի վրա կար միայն անպաճույճ 4 գերեզմանաքար՝ հետեւյալ մակագրություններով։ 1. «Թվ. † 1915. Տր. Ա՛Ծ. ՅՍ. ՔՍ. ողորմեա՛ այս տապանի նընջեալ Կալ անդր»։ 2. «1915 † Հայաստան. Ոսկո»[45]։

Այս համայնական գերեզմանատանը հուշարձան-կոթող կանգնեցնելու համար Ս. Էջմիածնի Եղբայրական օգնության հանձնաժողովի տրամադրության տակ կար հատուկ դրամագլուխ։ Բայց, հավանաբար, քաղաքական հետագա անցուդարձի հետ կապված Ս. Էջմիածնի Եղբայրական օգնությունը չկարողացավ կյանքի կոչել այդ ծրագիրը։

Հարյուրավոր դիակներ անթաղ էին մնում նյութական միջոցների եւ հնարավորությունների իսպառ բացակայության պատճառով, մինչդեռ քայքայվող մարմինները նոր սպառնալիքի էին վերածվել. բռնկվելու դեպքում համաճարակը կարող էր տարածվել ամբողջ Կովկասով մեկ։

Մ. արք. Օրմանյանին հաջողվել է պատմական որոշակի տեղեկագրերի օգնությամբ վերականգնել գաղթից հետո Էջմիածնի վանքի եւ Վաղարշապատի տարածքում ավելի քան 4 ամսվա ընթացքին (1915 թ. հուլիսի 28 – դեկտեմբերի 8) բազմատեսակ վարակիչ հիվանդություններից մահացած վասպուրականցիների ճշգրիտ վիճակագրությունը, որն ունի հետեւյալ պատկերը.

---

[43] Ավագ, Հեղեղացիր արմատներ (Մեծ եղեռնի 80-ամյակի առթիվ), Սուրբ Էջմիածին, 1997, էջ 13։

[44] Թիւրքահայ աղէտը..., էջ 47–48։

[45] Անդ, էջ 47–48։

Հուլիս 28—31	Մեռած է 61 անձ
Օգոստոս 1—31	Մեռած է 5003 անձ
Սեպտեմբեր 1—30	Մեռած է 2295 անձ
Հոկտեմբեր 1—31	Մեռած է 51 անձ
Նոյեմբեր 1—30	Մեռած է 181 անձ
Դեկտեմբեր 1—8	Մեռած է 35 անձ
	Ընդամենը՝ 8126 անձ[46]

Մահացությունն աճել է օգոստոսին. ամսի 12-ին մահացել է 132, 22-ին՝ 267, 23-ին՝ 192, 24-ին՝ 283, 25-ին՝ 264, 26-ին՝ 250, 27-ին՝ 334, 28-ին՝ 216, 29-ին՝ 357, 30-ին՝ 306, 31-ին՝ 290 հոգի։

Էջմիածնում եւ Վաղարշապատի տարածքում նկարագրված վիճակագրությունն իր մեջ ընդգրկում է տեղեկություններ վեց ամսվա վերաբերյալ (1915 թվականի հուլիսի 28-ից մինչեւ դեկտեմբերի 8-ը)[47]։ Այս փաստաթղթի վավերականությունը, թերեւս, անվիճարկելի է, քանզի Մ. արք. Օրմանյանը հայտնում է, որ «շատ քիչ տարակուսանքի տեղի կուտայ, մանաւանդ, որ մենք համեմատեցինք մահացողներու քանի մը վիճակագրական տախտակներու հետ եւ գտանք, որ ըստ ամենայնի մեր վիճակագրութիւնը ճշգրիտ ըլլալու ապացոյցներ ունի...»[48]։

Նույն ժամանակահատվածի վերաբերյալ վիճակագրական փոքր-ինչ այլ, բայց իրականությունը նորից մռայլ գույներով ներկայացնող տեղեկություն է տալիս «Հորիզոն»-ի վաղարշապատյան թղթակիցը, ըստ որի՝ քաղաքում մահացությունների թվական շարժն օգոստոսի 21-ից 30-ն ուներ հետեւյալ պատկերը. օգոստոսի 21-ին՝ 131 հոգի, 22-ին՝ 168, 23-ին՝

[46] «Թիւրքահայ աղէտը. Պատմական փաստաթուղթեր։ Ա. Տեղեկագիր տէր Մ[աղաքիա] արք. Օ[րմանեան]ի (նախկին նպատրիարք Թիւրքիոյ հայոց) նոր Ծանօթութիւններով եւ Յաւելուածներով, Ս. Էջմիածին, 1919, էջ 47—48։

[47] Օրմանյան սրբազանը նշում է, որ այս պատմարժեք տեղեկագիրը դժբախտաբար չի պահվել Էջմիածնի եղբայրական օգնության հանձնաժողովի արխիվներում։ Այն 1917 թ. վերջերին տարօրինակ կերպով գտնվել է Էջմիածնի պահեստներից մեկում՝ անպետք թղթերի հետ խառնված։ Տեղեկագրի անունը փաստաթղթի վրա գրված չէ։ Դրա փոխարեն շապիկի վրա շեղագիր նշված է հետեւյալը. «Արձանագրութիւն Վաղարշապատ մեռած հայ փախստականներին. 1915 թ. յուլիս 28 դեկտ. 8»։ Տես «Թիւրքահայ աղէտը...», էջ 47։

[48] Թիւրքահայ աղէտը..., էջ 45։

204, 24-ին՝ 234, 25-ին՝ 280, 26-ին՝ 268, 27-ին՝ 347, 28-ին՝ 357, 29-ին՝ 300, 30-ին՝ 314. ընդամենը տասն օրում՝ 2613 հոգի[49]։

«Արեւ» պարբերականի տվյալներով՝ 1915 թ. հուլիսի 28-ից մինչեւ օգոստոսի 25-ը Վաղարշապատում մահացել է 3539 մարդ[50]։ Համառուսաստանյան քաղաքների միության նախագահ Զելնակովին եւ գլխավոր լիազորի տեղակալ պրոֆ. Ն. Կիշկինին ուղղված՝ Ա. Խատիսյանի վերեւում հիշված հեռագրից պարզվում է, որ դիտարկվող ժամանակահատվածի մեկ ամսում Վաղարշապատում մահացել է 3400 մարդ[51]։ Իսկ համառուսաստանյան քաղաքների միության նախագահ Ա. Խատիսյանի՝ արեւմտահայ գաղթականների տեղաբաշխման մասին զեկույցից պարզվում է, որ 1915 թ. հուլիսի 25-ից մինչեւ օգոստոսի 20-ը Արեւելյան Հայաստանում մահացել էր շուրջ 10 000 գաղթական, որից միայն 4500-ը՝ էջմիածնում։ Ընդ որում՝ մահացածների ¾-ը կանայք էին եւ երեխաներ[52]։

Դեպքերի ականատես Բախշի Իշխանյանը փորձել է վեր հանել մահացողների թվաքանակի եւ դրա աստիճանական զարգացման մասին ճշգրիտ պատկերը՝ հիմք ընդունելով հուլիսի 28-ից մինչեւ օգոստոսի 28-ի տեղեկությունները։ Հուլիսի 28-ին մահացել է 33, 29-ին՝ 54, 30-ին՝ 96, 31-ին՝ 92, օգոստոսի 1-ին՝ 104, 2-ին՝ 93, 3-ին՝ 111, 4-ին՝ 121, 5-ին՝ 117, 6-ին՝ 112, 7-ին՝ 120, 8-ին՝ 126, 9-ին՝ 117, 10-ին՝ 90, 11-ին՝ 129, 12-ին՝ 139, 13-ին՝ 135, 14-ին՝ 165, 15-ին՝ 105, 16-ին՝ 90, 17-ին՝ 100, 18-ին՝ 124, 19-ին՝ 99, 20-ին՝ 102, 21-ին՝ 135, 22-ին՝ 168, 23-ին՝ 204, 24-ին՝ 234, 25-ին՝ 280, 26-ին՝ 300, 27-ին՝ 348, 28-ին՝ 354 հոգի[53]։

Հարկ է նկատել, որ բերյալ ցուցակի՝ մինչեւ օգոստոսի 15-ն ընկած տվյալները վերաբերում են Վաղարշապատում տեղաբաշխված եւ էջմիածնի վանքի շուրջը (Ներսիսյան լճի մերձակայք, անտառին հարակից մասեր, վանքի եւ ճեմարանի բակեր) խմբված, իսկ օգոստոսի 15-ից հետո միայն վանքապատկան տարածքներում պատսպարված փախստականներին։ Հուլիսի 28-ից մինչեւ օգոստոսի 28-ը՝ 32 օրվա ընթացքում, էջմիածնում մահացել է 4597 մարդ, որը կազմում է օրական, միջին թվով, 144 մահվան դեպք (970%)։ Մահացության ցուցանիշն աճում է հատկա-

---

[49] *Տե՛ս* Ա.-Դ0, *նշ. աշխ., էջ 485։*

[50] *«Արեւ», 1915 սեպտեմբերի 4, թիւ 140։*

[51] ЦГВИА, ф. 13273, оп. 1, д. 158, л. 3—4.

[52] ЦГВИА, ф. 13273, оп. 1, д. 156, л. 3.

[53] Բ. Իշխանեան, *նշ. աշխ., էջ 22—23։*

պես օգոստոսի 20-ից սկսած, որի ընթացքում մահացել է 2135 հոգի, իսկ դա նշանակում է, որ մահվան դեպքերն աճել են 246 %-ով[54]։

Այս ամենը հաստատվում է նաեւ համանման մեկ այլ վիճակագրությամբ, որն իր մեջ ընդգրկում է տասն օրվա ընթացքում մահացածների թիվը։ Օգոստոսի 21-ին գրանցվել է 131, 22-ին՝ 163, 23-ին՝ 104, 24-ին՝ 204, 25-ին՝ 234, 26-ին՝ 280, 27-ին՝ 268, 28-ին՝ 347, 29-ին՝ 357, 30-ին՝ 300, 31-ին՝ 314 մահվան դեպք[55]։

Սակայն որքան էլ որ հիշյալ տեղեկությունները ճիշտ լինեն, այնուամենայնիվ պետք է ենթադրել, որ իրականում մահացածների թիվն ավելին է եղել, քանի որ վիճակագրության աշխարհագրությունը դիտարկելով՝ կարող ենք տեսնել, որ դուրս են մնացել բազմաթիվ բնակավայրեր։

Համաճարակի զոհերի թիվն այնքան մեծ էր, որ շատերին չէին հասցնում անգամ թաղել։ Հովհ. Թումանյանը նշում է, որ «օգոստոսի 23-ից էջմիածնում 70 մեռել մնաց անթաղ, առաջին օրից էլ մի քանի տասնյակ կային, 24-ից ավելի շատ մնացին։ Գետինը պինդ է, եւ բանվորներ չեն գտնում։ Երեք օր առաջվա դիակները արեւի տակ ուռան-պատռեցին եւ գարշահոտություն տարածեցին»[56]։ Իսկ «Հորիզոն» պարբերականի 1915 թ. օգոստոսի 29-ի համարը հավաստում էր, որ «էջմիածնում մեռնում են օրական 300 հոգի. այսօր կային 500 անթաղ դիակներ։ Կենդանի մանցածները խուճապային սարսափի մէջ փախչում են, խոլերայ կայ։ Շտապեցէ՛ք ուղարկել բժշկական խմբեր»[57]։

Սեպտեմբերի 1-ից սկսած մահացածների թիվն աստիճանաբար նվազում է այնպես, որ սեպտեմբերի 20-ից հետո այն 25—30-ի է հասնում, եւ այսպես կամաց-կամաց մահացության դեպքերը պակասում են մինչեւ դեկտեմբերի սկզբները[58]։

Մեծ թվով մահացությունների հիմնական պատճառը զանազան հիվանդություններն էին եւ ստեղծված ծանր վիճակը։ Փախստականների մեծագույն մասը հիվանդ էր։ Նրանցից շատերը պառկած էին հենց Վաղարշապատի փողոցներում։ Ըստ բժիշկ Ա. Բաբալյանի հեռագրի՝ 1915 թ. սեպտեմբերին էջմիածնում կար 14800 գաղթական, որոնցից 3000-ը՝ հի-

---

[54] *Անդ, էջ 23—24։*

[55] Ա.-Դ0, *նշ. աշխ., էջ 285։*

[56] Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆ, *Ուսումնասիրություններ եւ հրապարակումներ, գիրք 2, Երեւան, 1969, էջ 377։*

[57] *«Հորիզոն», 1915 օգոստոսի 29, թիւ 194։*

[58] Բ. ԻՇԽԱՆԵԱՆ, *նշ. աշխ., էջ 32։*

վանդ[59]։ Նա նշում էր, որ գրության օրը «...մեռել են 207-ը»։ «Յուլիսի 28-ից մինչեւ սեպտեմբերի 5-ը մահացել է 7000 հոգի։ «Այսօր գնացքով Գանձակ են ուղարկուած 700 գաղթականներ... հիւանդանոցի համար անհրաժեշտ են 500 տաք վերմակ եւ 500 խալաթ։ Մեծ պակասութիւն է զգացւում բրնձի, շաքարի եւ թէյի։ Գաղթականների մեծ մասը կիսամերկ են»[60]։

Համաճարակային հիվանդություններից տարածված էին տենդախտը (իտալ.՝ scarlattina, *անգլ.՝* scarlet fever*), հարավարեւադարձային թանչախտը (հուն.՝* δυσεντερία, *անգլ.՝* dysentery*), եւ մի շարք այլ հիվանդություններ, որոնք սկիզբ էին առել դեռեւս գաղթի ճանապարհին[61], իսկ հուլիսի 25-ից հետո մոլեգնում էր նաեւ սեւցավը՝ հնդկախտ (հուն.՝* χολή, *անգլ.՝* cholera*)[62]։*

Սկզբնապես Վաղարշապատում առողջապահիկ (սանիտարական) կանխարգելիչ միջոցառումներ չէին իրականացվում, այլեւս չխոսենք մասնագիտացված հատուկ կառույցների մասին։ Սակայն հետագայում Եղբայրական օգնության կոմիտեն եւ Քաղաքների միությունը Վաղարշապատում եւ Երեւանում բացեցին 500 մահճակալով 6 հիվանդանոց, 1000 տեղանոց բաշխման կետ, մանկական ընդունարան՝ 3000 երեխայի համար[63]։

Համաճարակի առաջն առնելու նպատակով օգոստոսի 31-ից փախստականներին արգելվեց դուրս գալ քաղաքից, չնայած իրականում շատ դժվար էր համաճարակից խուճապահար եղած գաղթականությանը տեղում պահելը[64]։

1915 թ. հոկտեմբերի 24-ին հնդկախտի համաճարակը վերացվեց, սակայն շարունակում էր մոլեգնել բծավոր ժանտատենդի համաճարակը։ Ճեմարանի եւ հարակից վանական շենքերում հիվանդների համար դրվեց 570 մահճակալ։ Ս. Գայանե վանքի տարածքում եւս բացվեց ժանտատենդով հիվանդների համար բաժանմունք, ինչպես նաեւ ստեղծվեց բժիշկների շրջիկ խումբ, իսկ էջմիածնի կայարանի ճանապարհին

---

[59] ЦГВИА, ф. 13273, оп. 1, д. 158, л. 1.

[60] *«Արեւ», 1915 թ. սեպտեմբերի 11, թիւ 145։*

[61] Հովհ. Թումանյան, *Ուսումնասիրություններ եւ հրապարակումներ, գիրք 2, էջ 377։*

[62] ЦГВИА, ф.13273, оп. 1, д. 156, л. 2.

[63] М. А. Мелкумян, Материальное и медицинское обеспечение беженцев в городе Эчмиадзин в 1915 г., *ԲԵՀ, 1972, թիվ 3 (31), էջ 76։*

[64] Լ. Կարապետյան, *Հովհաննես Թումանյանի հասարակական գործունեությունը, Երեւան, 1992, էջ 168։*

դրվեց բժշկական արգելափակման-մեկուսացման (ֆր.՝ quarantaine — քառասնյակ, քառասունք) կետ՝ մաքրանոց։ Բացի այդ՝ 450 մահճակալանոց զինվորական հիվանդանոցի համար հարմարեցված նոր Վեհարանը եւս սկսեց ծառայել փախստականներին[65]։

Առանձնահատուկ ուշադրություն էր դարձվում նաեւ որբերի խնամքին, որոնց համար Էջմիածնում ստեղծվել էր երկու ապաստարան։ Դրանցից մեկն Էջմիածնի Եղբայրական օգնության, իսկ մյուսը Մոսկվայի հայկական կոմիտեի հովանու ներքո էր։ Հավաքվածները հիմնականում որբ երեխաներ էին, չնայած նրանց մեջ կային նաեւ այնպիսիները, որոնց ծնողները չէին կարողանում հոգալ իրենց զավակների անգամ նվազագույն կարիքները[66]։

Ծնողազուրկ 3500 երեխայի տեղավորել էին Գեւորգյան հոգեւոր ճեմարանի երկհարկանի շինության կամարների ներքո։ Նրանց խնամքն իրականացնում էր 100 հոգուց բաղկացած անձնակազմը։ Ճեմարանի սենյակները եւ միջանցքները լեփ-լեցուն էին տարբեր տարիքի, այդ թվում նաեւ ծծկեր, նույնիսկ մի քանի օրական որբերով[67], որոնք ուղղակի պառկած էին հատակին[68]։ Այդ մասին Ս. Վրացյանը նկատում է, որ «քարէ պաղ յատակի վրայ թափուած էին մի քանի տասնեակ երեխաներ, մինչեւ մէկ տարեկան, բոլորովին մերկ, շատերը նոյնիսկ անզօր լալու, նիհար, մեծ գլխով ու փոս ընկած աչքերով, որոնք սարսուռ էին ազդում նայողի վրայ»[69]։

Ընդհանուր առմամբ՝ Գեւորգյան հոգեւոր ճեմարանն իր հարկի տակ ապաստան էր տվել մինչեւ 10 000 երեխայի։ Կախված գաղթի ընթացքից՝ երեխաների թիվն աճել էր եւ 700-ից հասել 1500-ի, 3500-ի, 3700-ի, 7000-ի, 8000-ի եւ 10000-ի[70]։ Նրանց ամեն օր տրվել է թեյ, ապուր եւ սպիտակեղեն[71]։ Հովհ. Թումանյանը 1916 թ. օգոստոսի 1-ին Բորժոմից Զապել Եսայանին ուղարկած իր նամակում հիշում էր. «Սիրելի՛ տիկին Զապէլ... Անցեալ տարի էն ժամանակ, էջմիածին էի։ Անկարելի էր պատմել, թէ ինչ

---

[65] ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 100, թ. 1։

[66] Տե՛ս Положение беженцев..., էջ 15, հմմտ. Հովհ. Թումանյան, էջ 408։

[67] «Փայլակ», 1915, օգոստոսի 9, թիւ 44, հմմտ. Հովհ. Թումանյան, Ընտիր երկեր, հատոր 2, Երեւան, 1985, էջ 389։

[68] «Արեւ», 1915, օգոստոսի 13, թիւ 122. նաեւ Հ. Պարոպի, նշ. աշխ., էջ 112–113։

[69] Ս. Վրացեան, Կեանքի ուղիներով. դէպքեր, դէմքեր, ապրումներ, հտ. Գ., Պէյրութ, 1963, էջ 101։

[70] Բ. Իշխանյան, նշ. աշխ., էջ 20։

[71] Տե՛ս Положение беженцев..., էջ 16։

էր էջմիածինը անցեալ տարի էս ժամանակ։ Բայց ամիս ու կէս մնացի, զբաղուած էի գլխաւորապէս որբերով, եւ, յիրաւի, էն ժամանակ էլ, ես եւ տեսնում էի, եւ զգում էի դժբախտութեան ու թշուառութեան ահռելիութիւնը, բայց միայն հեռանալուց յետոյ, մանաւանդ այժմ է, որ չեմ կարողանում էլ նրանց տեսնել ինչպէս եւ գաղթականներին առհասարակ, բայց մանաւանդ նրանց, որբերին տեսնելու համար հսկայական ուժ է հարկաւոր...»[72]։ Մ. Սարյանը վկայում էր, որ ճեմարանի շենքի շուրջը փռված էին հարյուրավոր երեխաների սառած դիակները, որոնց արանքներում այստեղ-այնտեղ նստած կամ պառկած էին մահամերձ եւ արյունահոսությունից տառապող փոքրիկները[73]։

Ինչ վերաբերում է Վաղարշապատում գոյություն ունեցող մյուս երկու որբանոցներին, որոնք պահում էր Մոսկվայի հայկական կոմիտեն, որբերի թիվը հասնում էր 200–245-ի[74]։

Որբանոցի երեխաների մեջ հիվանդության դեպքերը գրանցվում էին հատկապես այն երեխաների միջոցով, որ ծնողներ ունեին, եւ վերջիններս գալիս էին նրանց տեսակցության[75]։

Հետագայում 1000 որբ տեղափոխվեց Թիֆլիս, 350-ը՝ Բաքու, 200-ը՝ Դիլիջան, 100-ը՝ Ախալքալաք, 500-ը՝ Երեւան, 150-ը՝ Ալեքսանդրապոլ, 100-ը՝ Նախիջեւան, 100-ը՝ Ղարաքիլիսա[76]։

Ընդհանրապես գաղթականների օգնության գործը կազմակերպելու համար ժամանակի պարբերական մամուլի էջերում հաճախ էին հանդիպում տեղական բնակչության տարբեր խավերին ուղղված ուղերձներ՝ կոչ անելով «...ահա այս վայրկեանին, քանի ուշ չէ ամեն ոք՝ թէ կին եւ թէ տղամարդ, թէ օրիորդ եւ թէ երիտասարդ, թէ մեծ եւ թէ փոքր, թէ ինտելիգենտ եւ թէ բանուոր դասակարգ, մի խօսքով ամեն մի կարող անձ... ձեր ուժերի չափ աշխատէք թեթեւացնել այդ դառնութեան բաժակը»[77]։

Գաղթականներին օգնելու հարցում անգնահատելի աշխատանք են կատարում էջմիածնի Եղբայրական օգնության կոմիտեն՝ Բագրատ եպիսկոպոսի նախագահությամբ, Հայկական կենտրոնական կոմիտեն (որի նախագահն էր Ռուսաստանի Պետական Դումայի նախկին անդամ

---

[72] ԳԱԹ, Հ. Թումանյանի արխիվ, ֆ. 8, գ. 319, թ. 1–2։

[73] Մ. Սարյան, նշ. աշխ., էջ 228։

[74] «Հորիզոն», 1915 օգոստոսի 21, թիւ 187, նաեւ Բ. Իշխանեան, նշ. աշխ., էջ 21։

[75] «Հորիզոն», 1915 թ. փետրուարի 8, թիւ 30։

[76] ЦГВИА, ф. 13273, оп. 1, д. 156, л. 5.

[77] «Эриванские обьявления», 15 августа, 1915 г., №40.

Սաղաթելյանը)[78], Մոսկվայի եւ Թիֆլիսի հայկական կոմիտեները։ Անուրանալի էր նաեւ կաթողիկոսարանի, թեմական առաջնորդների, ընդհանուր վարչության գործունեությունը։

1915 թ. հուլիսին էջմիածին եկավ Ռուսաստանի քաղաքների միության ներկայացուցիչ Յաշկինը, որ կազմակերպեց պետական օժանդակության բաշխումը։ Բոլոր կազմակերպություններն օրական ծախսում էին 20 000 ռ.[79]։ 1915 թ. օգոստոսին էջմիածնի շուրջ 40 հազար փախստականներին օրական տալիս էին 513 փութ ալյուր եւ 150 փութ հաց։ Միայն Մոսկվայի հայկական կոմիտեն Վաղարշապատում ուներ 8 կայան, ուր 20 հազար հոգու համար պատրաստում էին տաք կերակուր, թեյ, տրվում էր եռացրած ջուր[80]։ Սկզբից մինչեւ 1915 թ. հոկտեմբերի 9-ը էջմիածնում ստացվել էր 1 434 809 ռ., որից 150 000 ռ. տվել էր Տատյանա Նիկոլաեւնայի կոմիտեն, 84 412 ռ. 65 կոպ.՝ արտերկրի հայերը, 3446 ռ. 82 կոպ. ստացվել էր օտարներից, իսկ 1 196 949 ռ. 91կոպ.՝ Ռուսաստանի հայերից[81]։ Իսկ 1916 թ. հունիսի 1-ից մինչեւ օգոստոսի 31-ը հայ գաղթականների օգտին էջմիածնում ստացվել էր 298 258 ռ. 40 կոպ., որից 192 984 ռ.՝ պետության եւ Տատյանյան կոմիտեի կողմից, 64 766ռ. 75 կոպ.՝ արտասահմանյան հայ գաղութներից, 40 106 ռ.՝ վաճառված ալյուրից եւ ապրանքներից, 401 ռ. 5 կոպ.՝ Ռուսաստանից ստացված նվիրատվություններից։ Սկզբից ի վեր հանգանակված ողջ գումարը կազմում էր 2 658 870 ռ.[82]։

Օգնության գործը խիստ տուժում էր միասնական համակարգվածության եւ պատշաճ կազմակերպվածության բացակայության պատճառով։ Ճիշտ չէին կատարվում գաղթականների հաշվառումը եւ հացի մատակարարումը։ Չնայած այն բանին, որ օրապահիկը տրվում էր 1,5 անգամ շատ, բաշխումը խիստ անկանոն էր[83]։ Հասարակական հիմնարկությունները, չխնայելով իրենց ուժերը, գաղթականական ամբոխից առանձնացնում էին միայն նրանց, ովքեր բոլորովին անօգնական վիճակում էին կամ մահամերձ։ Իսկ համեմատաբար լավ վիճակում գտնվող բազմաթիվ հիվանդներ մնում էին առանց որեւէ բժշկական օգ-

[78] «Արեգ», 1915, ապրիլի 22, թիւ 25։
[79] ЦГВИА, ф. 13273, оп. 1, д. 156, л. 5.
[80] «Հորիզոն», 1915, օգոստոսի 21, թիւ 187. նաեւ М. А. Мелкумян, նշ. աշխ., էջ 76։
[81] «Վան-Տոսպ», 1916, յունուարի 17, թիւ 8։
[82] «Վան-Տոսպ», 1915, դեկտեմբերի 6, թիւ 2։
[83] Տե՛ս Положение беженцев..., էջ 11։

նության։ Լինում էին դեպքեր, որ հիշյալները հեռանում էին Վաղարշապատից՝ հեղեղելով եւ վարակը տարածելով այլ քաղաքներում եւ իրենց անցած ճանապարհներին։

Ճշմարտության դեմ չմեղանչելու համար պետք է ասել, որ այդ շրջանում գովեստների հետ մեկտեղ եղան նաեւ քննադատություններ՝ ուղղված էջմիածնի Եղբայրական օգնության գլխավոր կոմիտեին[84]։ Միեւնույն ժամանակ գրվեցին քննադատական հոդվածներ։ Ի պատասխան այդ ամենի՝ հրապարակվեցին ծախսերի վերաբերյալ տվյալները[85]։

Էջմիածնի գավառը ծանրաբեռնված էր գաղթականներով։ Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Երեւանի նահանգի մյուս գավառները գտնվում էին նույն վիճակում, ինչ էջմիածինը, Երեւանի նահանգապետը 1915 թ. սեպտեմբերի 15-ին էջմիածնի Եղբայրական օգնության կոմիտեի գլխավոր կարգադրիչ հանձնաժողովին ուղղված իր զեկուցման մեջ խնդրում էր, որ գաղթականներին էջմիածնի գավառից տեղափոխեն Ելիզավետպոլի նահանգ, ընդ որում՝ անասուններ ունեցողները պետք է շարժվեին Երեւանով դեպի Դիլիջան, իսկ չունեցողները պետք է մեկնեին երկաթգծով[86]։

Ելնելով ստեղծված իրավիճակից՝ 1915 թ. սեպտեմբերի 17-ին Երեւանի նահանգային կոմիտեն քննարկեց էջմիածնի գյուղերում հանգրվանած փախստականների թեթեւացման հարցը[87]։ Որոշակի տեղափոխումներից հետո՝ 1915 թ. հոկտեմբերին, էջմիածնում ապաստանած հայ գաղթականների թիվը նվազեց՝ հասնելով 7000–8000-ի[88]։ Եւ քանի որ որոշվել էր այլեւս վանքում գաղթականներ չպահել, նրանց բոլորին տեղավորեցին մոտակա գյուղերում[89]։

Երկարատեւ սպասումից հետո՝ 1916 թ. փետրվարին, սկսվեց սպիտակեղենի բաշխումը։ Նախապես կայացրած որոշման համաձայն՝ 2–7 անձ ունեցող ընտանիքներին տրվում էր՝ 1 ներքնակ, 2 բարձ եւ 1 վերմակ, իսկ 7 հոգուց ավելի ընտանիքներին՝ 2 ներքնակ, 4 բարձ եւ 2 վերմակ[90]։

---

[84] *«Հորիզոն», Թիֆլիս, 1915, փետրուարի 8, թիւ 39, հմմտ. նույնի փետրուարի 18, թիւ 59։*
[85] *«Մշակ», 1915, փետրուարի 29, թիւ 49.*
[86] *ՀԱԱ, ֆ.102, ց. 1, գ.1057,* I *մաս, թ. 203։*
[87] *ՀԱԱ, ֆ.102, ց.1, գ.1057,* II *մաս, թ. 284։*
[88] ГА РФ, ф. Д. П. 29, оп. 245, д. 168(2), л. 20.
[89] *«Հայրենիք», 1915, հոկտեմբերի 4, թիւ 5։*
[90] *«Աշխատանք», 1916, յունիսի 1, թիւ 9։*

1916 թ. օգոստոս—սեպտեմբերին նորից սաստկացավ պարենային ճգնաժամը։ Պարենի բացարձակ բացակայության պատճառով էջմիածնի Եղբայրական օգնության կոմիտեն ստիպված էր դադարեցնել հացի բաշխումը 1916 թ. հուլիսօգոստոսյան գաղթից հետո էջմիածնում հայտնված փախստականներին, որոնցից շատերն իրենց գոյությունը պահում էին մերձակա այգիների պտուղներով[91]։

Գաղթականների հոգածության գործը Վաղարշապատում բարվոք դարձնելու եւ պատշաճ հիմքերի վրա դնելու համար 1916 թ. հոկտեմբերի 1-ի նիստում (կայացել է ծխական վարժարանի շենքում) Գեւորգ վրդ. Զորեքչյանի գլխավորած Եղբայրական օգնության հանձնաժողովը Վաղարշապատի եւ շրջակայքի համար ընտրեց 100 հոգուց բաղկացած նոր՝ արեւմտահայ անդամներից բաղկացած հանձնաժողով, որի նախագահ դարձավ Միհրան Սերճանյանը, իսկ քարտուղար՝ Մամբրե Գաբրիելյանը։ Ջանազան կենսական խնդիրներին հրատապ լուծում տալու համար հանձնաժողովը կազմավորեց 3—5 անդամներից բաղկացած երեք առանձին՝ ուսումնական, տնտեսական եւ դատական մարմիններ[92]։

Այսպիսով՝ Առաջին աշխարհամարտի տարիներին ողջ մնացած արեւմտահայերից եւ պարսկահայերից շատերն ապաստանեցին ինչպես Ռուսական կայսրության տարբեր շրջաններում, այնպես եւ Վաղարշապատում։ Այստեղ, հոգեւոր մխիթարությանը զուգահեռ, էջմիածնի Կաթողիկոսությունը սատարեց ու բոլոր հնարավոր միջոցներով օժանդակեց Մայր Աթոռի տարածքում հանգրվանած բազմահազար հայ տարաբախտ գաղթականներին, հոգաց նրանց պարենային, բժշկական եւ կենցաղային կարիքները։

РЕЗЮМЕ

Много чудом спасшихся и оставшихся в живых армян из Игдира, Васпуракана, Вана и других городов и населенных пунктов во время Первой мировой войны нашли убежище как в различных южных губерниях Российской империи, так и в Ереванской и Вагаршапатской областях — в населенных пунктах Араратской долины и непосредственно на территории Святого Эчмиадзина.

[91] *«Աշխատանք», 1916, սեպտեմբերի 24, թիւ 42։*
[92] *«Աշխատանք», 1916, նոյեմբերի 5, թիւ 54։*

Здесь параллельно с глубоким духовным утешением Эчмиадзинский Католикосат всячески поддерживал и помогал всеми возможными способами тысячам несчастным, проживающим на территории Св. Эчмиадзина и близлежащих поселениях, заботясь об их продовольственных, медицинских и бытовых нуждах.

SUMMARY

During the First World War, a great number of miraculously saved and survived Armenians from Igdir, Vaspurakan, Van and other places found refuge both in various southern provinces of the Russian Empire, and in the regions of Yerevan and Vagharshapat: in the settlements of Ararat Valley and directly in the territory of Holy Etchmiadzin. Here, thousands of unfortunate people living in the territory of Holy Etchmiadzin and nearby settlements, in parallel with deep spiritual consolation, received great support and help from the Catholicosate of Etchmiadzin that provided them with food, medical and household goods.